

մօտեցաւ Գուրգէն, իջաւ ձիէն, եւ երկսայրի դաշոյն մը հասելով մէջքէն ձեռքին կապերը կտրտեց, իսկ ոտքին շղթայները զննեց տեսաւ, որ կղպակով էին, պէտք էր կամ բանալին գտնել՝ կամ դարբինի մը կտորել տալ: Այն միջոցին ամեն կողմէն վազող վազողի կը հասնէին, ոմանք գինեալ, ոմանք անգէն, եւ մեծ փութով եւ եռանդեամբ իրենց ազատ եալ իշխանին շուրջը կառնուին, մէկն իր գլխարկը կը գտներ կը բերեր, միւսը իւր սուրբ, ուրիշ մը իւր աջ ուսին վրայի վերքը կը պատեր: Իսկ Գուրգէն իբր թէ լոկ հանդիսատես մէկ կողմ կեցեր էր, մինչեւ որ Մուշեղ իւր ապուշութիւնը թօթափելով՝ դարձաւ՝

— Ո՛վ քաջ,— ըսաւ,— խնդրեմ շնորհել ինձ քու անունդ, որ իմանամ թէ ո՞ւմ շնորհապարտ եմ այս ազատութեան. որպէսզի արժանաւոր փոխարէն ընեմ:

— Սուրեն Շաղգումեցի կանուանիմ,— ըսաւ Գուրգէն:

— Շատ լաւ, տեար Սուրեն, եթէ կը հաճիս իմ ամրոցս կը բնակիս, եթէ ոչ՝ պարգէններ կընդունիս այս մեծ ծառայութեան փոխարէն: Երթանք հիմա:

Իսկ Գուրգէն առանց պատասխանի անգամ արժանի համարելու այս խօսքերը՝ կը դիտեր Մուշեղի կերպարանքը. լաւ, միամիտ մարդ մը կը նշմտրեր չաւեաւոր կարողութեամբ թէ մտքի եւ թէ մարմնոյ կողմանէ, ոչ սիրելի եւ ոչ ատելի իր ժողովրդեան, քառասնամեայ գրեթէ բայց յոգնած ի գուարճութեանց, ի գիներբուաց եւ ի մոլութեանց. կատարեալ պատկեր ժամանակի իշխանաց: Եւ այս դիտողութեամբ, «Մե՛ղք, մե՛ղք հազար անգամ մեզի՝ իմ Յեղինէին», կ'ըսեր մտքէն եւ լռիկ կը հետեւեր ամբոխին, որ յարգանօք մեծ շրջանակ միջոց մը կը թողուր իւր Տոլակին չորս կողմը, եւ մօտ եկողները փսփսութեամբ կ'ըսէին իրարու. «Սա՛ է մարդը, որ քսան-երեսուն հոգին ցրուեց եւ իշխանն ազատեց»: Իսկ նոքա, որ հեռուէն կ'ուզային, աւելի բարձր ձայնով կը խոսէին իրենց մէջ, իշխանը թողլով փախչողները՝ քուրդաց խումբը յարեարէն աւելի կը